

ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ
ԴԱՐՁՎԱԾԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լեզվաբանության մեջ նույնականության ու տարբերության (ինքնուրույնության) խնդիրն ընդհանրական բնույթ ունի: Տեղին կլինի հիշատակել Ֆ. դը Սոյուրի միտքն այն մասին, որ «լեզվական ամբողջ մեխանիզմը պատմում է բացառապես նմանությունների ու տարբերությունների շուրջը, և որ վերջիններս առաջինների հակառակ կողմն են»¹:

Դարձվածների (այսուհետև՝ Դ) նույնականության ու տարբերության հարցը միշտ եղել է դարձվածաբանների ուղադրության կենտրոնում, սակայն տեսական ընդհանրացումները քիչ են ու հակասական: Մինչդեռ այս հարցի ուսումնասիրությունը կարևոր ու անհրաժեշտ է ոչ միայն տեսական դարձվածաբանության, այլև դարձվածագրության համար, որի խնդիրներից մեկն էլ բառարանում Դ-ների բնութագրման առավել լրիվ ու միասնական սկզբունքների մշակումն է:

Դ-ների նույնականության ու տարբերության հարցը ընդարձակ է ու բազմապլան: Այն ընդգրկում է դարձվածային տարբերակների ու հոմանիշների ուսումնասիրությունն ու սահմանազատումը, բազմիմաստության ու համանունության տարբերակումը, Դ-ների բաղադրիչային կազմի փոփոխությունները, կիրառական ու բազմաթիվ այլ հարցեր, որոնցից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել: Քննենք դրանցից երկուսի՝ դարձվածային տարբերակ— հոմանիշ և բազմիմաստություն— համանունություն հակադրությունների բնութագրման և բառարաններում դրանց արտացոլման առանձնահատկություններն ու հնարավորությունները ժամանակակից հայ բառարանագրության և դարձվածագրության նյութի հիման վրա²:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածային տարբերակների երկու ըմբռնում կա՝ նեղ և լայն: Նեղ ըմբռնումը պաշտպանում են Ա. Կունինը, Ի. Չերնիշովան, Յու. Ավալիանին, Լ. Ռոյզենզոնը և ուրիշներ: Նրանք Դ-ների տարբերակները սահմանափակում են ձևակառուցվածքային փոփոխություններով միայն և չեն ընդգրկում իմաստային ձևափոխությունները: Լայն ըմբռնման կողմնակիցներ Վ. Արխանգելսկին, Վ. Տելիան, Վ. Զիմինը և այլ լեզվաբաններ գտնում են, որ բառային տարբերակներն ընդգրկում են Դ-ի ոչ միայն արտահայտության, այլև բովանդակության պլանը:

Քննելով Դ-ները նույնականության ու տարբերության տեսանկյունից և դրանք դիտելով որպես միևնույն երևույթի երկու կողմեր՝ Վ. Զիմինն առաջարկում է հետևյալ դասակարգումը.

1. Դ-ի իմաստային նույնության պահպանման պայմաններում ձևակառուցվածքային փոփոխակում. դա տարբերակների առաջացումն է արտահայտության պլանում, որը Վ. Զիմինն անվանում է ձևականացվածային տարբերակներ:

¹ Ф. Соссюр, Курс общей лингвистики, М., 1933, с. 109.

² Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975 (այսուհետև՝ ՀԼԴԲ), է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1969—1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ):

2. Դ-ի կառուցվածքային նույնության պահպանման պայմաններում իմաստային երանգների փոփոխակում. գա տարբերակների առաջացումն է բովանդակության պլանում: Դրանք անվանվում են իմաստային տարբերակներ³:

Հայերենի Դ-ների նույնականությունն ու տարբերությունը փորձենք դասակարգել հենց այս սկզբունքով: Ձևակառուցվածքային տարբերակությունը (փոփոխակությունը) կապվում է Դ-ների հոմանիշության հետ: Լինելով տարբեր, ինքնուրույն միավորներ՝ հոմանիշ Դ-ները հակադրվում են դարձվածային տարբերակներին՝ նույնական միավորներին: Իմաստային տարբերակությունը բազմիմաստությունն է, որն առնչվում է համանունության հետ: Այսպիսով, Դ-ի ձևակառուցվածքային և իմաստային տարբերակները ներկայացնում են նույնականություն-տարբերություն հակադրության առաջին, իսկ հոմանիշությունն ու համանունությունը՝ երկրորդ եզրը: Ձևակառուցվածքային տարբերակները նույն Դ-ի փոփոխականներն են, որոնք չեն խախտում այդ Դ-ի իմաստային նույնությունը, ունեն պատկերային նույն հիմքը և տարբերվում են միայն որևէ բաղադրիչով կամ քերականական կառուցվածքով⁴: Օրինակ՝ իրեն փշերի (ասեղների) վրա գզալ, իրերի (հազգամանեֆների) բերումով (բերմամբ), աչիք բաց անել (բացել, բանալ), աչ (աչ-ուկանջ) դառնալ, խոսք (եր)ք մեկ անել և այլն: Ա. Կունինը գտնում է, որ «տարբերակները Դ-ի տարատեսակներ, զուգաձևություններ են, որոնք նույնական են իրենց արտահայտած իմաստների որակով ու քանակով, ոճական ու շարահյուսական գործառույթներով, այլ բառերի հետ զուգորդվելու կարողությամբ, երբ Դ-ում առկա է բառային կազմի, բառաձևերի կամ շարահյուսության փոփոխություն»⁵: Դ-ի բառային կազմի մասնակի համապատասխանության պայմաններում իմաստային երանգների, ոճական նկարագրի, Դ-ի հիմքում ընկած պատկերի և զուգորդականության փոքր տարբերությունն արդեն նոր որակ է տալիս: Այս նոր միավորները, որպես միջանկյալ մի տեսակ, առանձնացնում են Ա. Կունինը և Ս. Դավրիյանը՝ դրանք համապատասխանաբար անվանելով կառուցվածքային հոմանիշներ⁶ (структурные синонимы) կամ տարբերակ-հոմանիշներ⁷ (варианты-синонимы): Այնինչ Վ. Տելիան, Ն. Շանսկին, Մ. Սիդորենկոն և ուրիշներ իմաստային նույնության սահմաններում հնարավոր են համարում տարբերակների հուզարտահայտչական ու ոճական տարբերությունները: Նշված երկու տեսակետներն էլ Դ-ի նույնականությունը բնութագրելիս հիմնվում են իմաստային նույնության վրա, սակայն այդ նույնության տարբեր սահմաններ են նշում:

Դ-ը լեզվական բարդ կառույց է, որի արտահայտության պլանի քննության ժամանակ պետք է ուսումնասիրվեն ոչ միայն հնչյունական ու բառական, այլև ձևաբանական ու շարահյուսական նկարագրերը: Այսպիսով, դարձվածային տարբերակները կարելի է քննել ու բնութագրել հնչյունական, բառական, լեզվաբանական տեսանկյուններից: Քանի որ հնչյունական, ուղղագրական տարբերակների որոշելն ու բառարանում դրանց տեղագրելն առանձնապես դժվարություն չի ներկայացնում (այդպիսիք են օրինակ՝ աբեր մայր(մեր) մանել, աբ(ի)նի լեզվով խոսել, հարց ու փոք (հարձուփոք) անել, գոյությունը

³ В. И. Зиянин, К вопросу о вариантности фразеологических единиц («Проблемы устойчивости и вариантности фразеологических единиц», Тула, 1972, с. 70—83).

⁴ Նույն տեղում, էջ 78:

⁵ А. В. Кунин, Основные понятия английской фразеологии как лингвистической дисциплины («Англо-русский фразеологический словарь», М., 1967, с. 1250).

⁶ Նույն տեղում:

⁷ С. Г. Гавриен, Синонимия фразеологических сочетаний современного русского языка («Вопросы фонетики, словообразования, лексики русского языка и методики его преподавания», Пермь, 1964, с. 194—195).

Դ(ա) շտալ և այլն), անդրադառնանք միայն բառական և քերականական տարբերակների մշակման հարցին:

Բառական տարբերակներն առաջանում են Դ-ի բառային կազմի փոփոխությամբ: Նման տարբերակության երկու հիմնական տեսակներ են դիտվում. 1) Դ-ի մի քանի բաղադրիչներից միայն մեկի փոփոխակում, 2) Դ-ի բաղադրիչների քանակային փոփոխություն (էլիպսիսի ճանապարհով): Բառական կազմի փոփոխական դեպքում Դ-ի նույնականությունը չի խախտվում, եթե՝ ա) չի խախտվում Դ-ի ամբողջական իմաստային արժեքը, բ) անփոփոխ պահպանվում է Դ-ի քերականական բնութագիրը:

1. Դ-ի փոփոխակվող անդամներն իմաստային առումով միմյանց նկատմամբ տարբեր հարաբերությունների մեջ կարող են գտնվել. ա) կարող են հոմանիշ լինել ինչպես Դ-ի սահմաններում, այնպես էլ հայոց լեզվի բառային համակարգում ընդհանրապես: Օրինակ՝ կախաբանական (մոգական) գավազանի շարժումով, Լուկուլլոսի խնջույք (սեղան, ճաշ, կերակուր), որտեղ է թաղված (թափված) շան գլուխը և այլն: բ) Կարող են գտնվել տեսակի և դասի (հիպոնիմ-հիպերոնիմ) իմաստային կապի մեջ: Այսպես՝ ռոմ(ֆ)երն անկողնի (վերմակի) շափով մեկնել, պտուղը (խնձորը) ծառից (խնձորենուց) ճեռու չի բեկնում, ծառի (ճեղքուկի) սիրտ և այլն: գ) Ծրբեմն (շատ-հազվադեպ) կարող են նաև հակահիշներ լինել՝ չխախտելով իմաստային նույնությունը: Այսպես՝ ասածո (սատանայի) աչքը փաղցր լինել (մեկի վրա), կարն կապել (կտրել) և այլն: դ) Կարող են միմյանց նկատմամբ հոմանշային, հականշային, հիպոնիմ-մային հարաբերությունների մեջ չգտնվել, սակայն, այնուամենայնիվ, պատկանել միևնույն իմաստային կամ թեմատիկ դաշտին, օրինակ՝ պտուերն էլ ականջ (լեզու) ունեն, առաջին խմորագունդը (ճացը) կուտ դառնալ, (եռ դառնալու) կամուրջները (նավերը) այրել և այլն: ե) Կարող են իմաստային որևէ անմիջական կապ չունենալ, ինչպես՝ ճանապարհ սովորեցնել (ցույց տալ), ոսկու մեջ թաղված լինել (լողալ), ռ՝ր ֆամին բերեց (պտուեցրեց, փչեց) և այլն: Տարբերակ բաղադրիչների միջև երբեմն հոմանշային հարաբերություններ են ստեղծվում հենց Դ-ի մեջ: Սրանք կոչվում են համատեքստային հոմանիշներ, օրինակ՝ լավ և ուրախ բառերը՝ լավ (ուրախ) դեմք վատ խաղի մամուռն է Դ-ում, ծուռ և թշնամի բառերը՝ ծուռ (թշնամու) աչքով նայել Դ-ում և այլն:

2. Դ-ի բառական տարբերակների մեկ ուրիշ տեսակն էլ պայմանավորված է նույն Դ-ի ամբողջական և կրճատ ձևերի զուգահեռ գոյությամբ ու օգտագործմամբ, այսինքն՝ Դ-ի քանակական կազմի փոփոխությամբ: Դ-ի ամբողջական (լրիվ) և կրճատ ձևերն առաջանում են էլիպսիսի (զեղչման) միջոցով: Ձեղչումը բառերի կրճատումն է, որը հեշտությամբ կարելի է վերականգնել համատեքստում և իրադրության մեջ⁸: Լեզուն ունի նույն ինֆորմացիան ավելի սեղմ, հակիրճ արտահայտելու և դրանով հաղորդման ու հաղորդակցման գործընթացն ավելի արագացնելու միտում: Էլիպսիսն այս միտումի դրսևորումներից մեկն է: ՀՀԴԲ-ում գտնում ենք դարձվածային՝ էլիպսիսի այսպիսի օրինակներ՝ թուրք (երկար) կտրել, լեռը (երկնեց) մուկ ծնեց, լեզվի տակ (օծի) թույլ լինել, ճավառ (ու օրենք) չունենալ և այլն: Դ-ի ամբողջական և կրճատ ձևերի տարբերակումը պայմանավորված է կամրնտիր անդամի ճիշտ ընտրությամբ և Դ-ի պարտադիր բաղադրիչային կազմի որոշակի առանձնացմամբ: Կամրնտիր անդամը գլխաբառում պետք է անպայման տարբերակի համապատասխան նշումն ունենա: Օրինակ՝ բարկությունից եփ գալ Դ-ը ՀՀԴԲ-ում տրված է առանց այդ նշումի, մինչդեռ, մեր կարծիքով, եփ գալ և բարկությունից եփ գալ լեզվում հավասարապես գործածվում են և դրանք կարելի է ներկայացնել որպես նույն Դ-ի լրիվ և կրճատ տարբերակներ՝ եփ գալ (բարկու-

⁸ О. С. Ахмазова, Словарь лингвистических терминов, М., 1969, с. 252.

քյունից, անճանգստությունից և այլն) «անհանգստանալ, բարկանալ, իրեն ուտել» նշանակությամբ:

Նրբեմն էլ կատարվում է հակառակ երևույթը՝ Դ-ի պարտագիր անգամը համարվում է կամրնտիր, և անհամապատասխանությունն է ստեղծում Դ-ի իմաստի և ներկայացվող իմաստային բնութագրի միջև: Այսպես, մեռելի նման (պես) ֆենել Դ-ն իր կառուցվածքով նմանեցնելով սառի նման (պես), մի մաքուր նման (պես) Դ-ներին՝ բառարանի հեղինակները ներկայացնում են մեռելի նման կամ պես (ֆենել և այլն) ձևով, որտեղ ֆենել-ը, պետք է հզրակացնել, կամրնտիր անգամ է կամ Դ-ը համատեքստի հետ կապող, նրա զուգորդականությունը բացահայտող անգամ, ինչպես ճիգ մաաի նման (պես) գիտենալ, ճանաչել և այլն Դ-ում գիտենալ և ճանաչել անդամները: Այնինչ ֆենել-ն այս Դ-ում պարտագիր անգամ է, որը հեշտությամբ կարելի է բացատրել իմաստային կողմի բնութագրման միջոցով: Այսպես, այն նշանակությունը՝ «խորը», որ բառարանում բերվում է մեռելի նման (պես) կապակցության համար, իրականում վերաբերում է մեռելի նման(պես)ֆենել կազմին: Դրանում կարելի է համոզվել սուբստիտուցիայի (փոխարկման) միջոցով՝ ֆենել անգամը ընկնել անգամով փոխարինելով, որի հետևանքով ստացվում է մի նոր Դ՝ անփոփոխակ, իր համապատասխան նշանակությամբ՝ մեռելի նման(պես) ընկած — «անշարժ»: Նույնանման այլ սխալներից ու անհամապատասխանություններից խուսափելու համար բառարանի նշումները պետք է հնարավորին չափ ստույգ ու ճշգրիտ լինեն:

Քերականական տարբերակները Դ-ի հարացուցային այնպիսի ձևերն են, որոնք ենթարկված են իմաստային չեզոքացման: Դարձվածաբանական գրականության մեջ Դ-ի ձև ասելով հասկանում են՝ ա) Դ-ի բաղադրիչային կազմն իր բազմապիսի ձևափոխություններով և կառուցման առանձնահատկություններով, բ) նրա հարացուցային ձևերը, որոնք ծառայում են Դ-ը խոսքի մեջ ներմուծելուն և այլ բառերի ու արտահայտությունների հետ հարաբերելուն: Ինչպես դարձվածաբանության, այնպես էլ դարձվածագրության համար խիստ կարևոր է տարբերել Դ-ի ներքին կապերը՝ այն հարաբերությունները, որոնք ձևավորում են Դ-ը որպես ամբողջություն, և արտաքին հարաբերությունները, որոնք ծառայում են Դ-ը համատեքստում, խոսքում իրացնելուն: Առաջին դեպքում քերականական տվյալ իմաստը Դ-ում մթագնված է, և համապատասխան տարբերակի փոխարկումը որևէ փոփոխություն չի առաջացնում Դ-ի բովանդակության պլանում և որևէ դեր չի կատարում Դ-ը քերականորեն համատեքստի հետ համաձայնեցնելու գործում: Տեղի է ունենում քերականական իմաստների չեզոքացում, որը և հանգեցնում է քերականական տարբերակների առաջացման: Տարբերակիչ հատկանիշների այս չեզոքացումը Դ-ի ձևակառուցվածքային տարբերակների համար պարտագիր պայման է⁹: Այսպես՝ ինչ ասել կուզի(կուզես), ինչ(եք) եմ փաշել, սրան նայիր(նայեք) և այլն:

Համատեքստում Դ-ը կարող է ենթարկվել համապատասխան քերականական փոփոխությունների՝ կախված կապակցության առանցքային բառի խոսքիմասային պատկանելությունից ու դրան բնորոշ քերականական կարգերից. դրանք կարող են լինել եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, առման և այլ կարգի փոփոխություններ, օրինակ՝ իրենեմվ անել Դ-ը՝ իրենցով անել, ինձնով արեցի, քեզնով ես անում և այլն, դու ողջ լինես Դ-ը՝ դուք ողջ լինեք և այլ հարացուցային ձևեր կարող են ունենալ: Այս տարբերությունը պետք է հաշվի առնել դարձվածագրական աշխատանքի ժամանակ՝ զգուշանալով հարացուցային ձևը որպես տարբերակ ներկայացնելուց. մի բան, որ քիչ չի հանդիպում բառարաններում:

Քերականական տարբերակների մեջ կարելի է զանազանել այնպիսիները, որոնք ունեն քերականական մեկ արժեք, ասենք, ձևաբանական, շարա-

⁹ Տե՛ս В. И. Зими́н, նշվ. աշխ., էջ 81:

հյուսական, բառակազմական և այլն: Տարբերակներն իրենց քերականական նկարագրով կարող են նաև երկարժեք լինել, ինչպես՝ ձևաբանական-շարահյուսական, բառաշարահյուսական և այլն:

1. Ձևաբանական տարբերակները Դ-ի հնարավոր փոփոխություններն են բաղադրիչների ձևի սահմաններում՝ Դ-ի բառական և քերականական կարգալին իմաստների պահպանմամբ¹⁰: Դ-ի բաղադրիչները քերականական տարբեր կարգի փոփոխություններ կարող են կրել:

ա) Դ-ի ձևաբանական տարբերակներ կարող են առաջանալ նրա բաղադրիչի եզակի և հոգնակի ձևերի զուգահեռ գոյությամբ: Օրինակ՝ գործ(ե)րը և բեսի վրա թողնել, հոգին առամ(ենք) ի թակ առնել և այլն: Բառարանում այս ձևերը պետք է ներկայացվեն միասին, որպես տարբերակներ՝ իմաստային միևնույն հիմքն ունենալու սկզբունքով, որը, սակայն, հետևողականորեն չի կիրառված: Եվ միայն այն դեպքում, երբ եզակի ու հոգնակի բառաձևերով փոփոխակից զուգահեռ Դ-ներն ունեն միմյանցից տարբերվող իմաստներ և այդքանով իսկ արդեն նույնական չեն, առանձնանում են որպես միանգամայն տարբեր ու ինքնուրույն միավորներ՝ անփոփոխակից, դրանք պետք է միմյանցից անջատ ներկայացնել: Այսպես, օրինակ՝ ռոֆ երկարացնել (մեկնել, պարզել) Դ-ի բառային տարբերակների և դրանց հետ զուգահեռաբար գոյություն ունեցող ռոֆեր(առնել) երկարացնել (մեկնել, պարզել) տարբերակային շարքի տարբեր իմաստներն այս երկու շարքերն առանձնացնում են որպես ինքնուրույն միավորներ: Եզակի բաղադրիչով Դ-ն իր բառական տարբերակներով արտահայտում է ճշգրիտ, համարձակվել, հանդգնել մեկին հավասար մի բան անելու, մեկի հետ համեմատվելու իմաստը և որպես տարբերակ-բաղադրիչներ ընդունում է նաև նեղել, զցել բառերը: Մինչդեռ հոգնակի բառաձևով դարձվածային տարբերակների շարքը, որպես բառական տարբերակ ընդունելով նաև անել, ձգել բառերը, ունի «մեռնել, սատկել» իմաստը: Ուստի այս Դ-ները՝ ռոֆ երկարացնել (...) և ռոֆեր երկարացնել(...), ամենևին էլ ձևաբանական տարբերակների շարքեր չեն, և բառարանում դրանք ներկայացնելիս ու բնութագրելիս պետք է արտակարգ զգույշ և խիստ ստույգ լինել դրանց բառային ու ձևաբանական տարբերակները նշելիս ու մեկը մյուսին հղելիս:

բ) Միևնույն գլխաբառի սահմաններում պետք է ներկայացնել նաև դարձվածային այն տարբերակները, որոնք ունեն որոշյալ և անորոշ իմաստներով (համապատասխանաբար՝ հոդով և անհոդ ձևերով) գործածվող բաղադրիչներ, օրինակ՝ շան լափ(ը) լցնել (թափել) գլխին, համի(ն)ընկնել և այլն:

Ձևաբանական տարբերակներ կարող են առաջանալ նաև այլ ճանապարհներով՝ իրերի բերմամբ(բերումով), եղունգները կրծել(կրծոտել) և այլն, որոնց մանրամասն դիտարկումը մեր նպատակից դուրս է:

2. Շարանյուսական տարբերակները Դ-ի ներքին կառուցվածքին վերաբերող բազմազան փոփոխություններն են, որոնք չեն խախտում Դ-ի իմաստային նույնությունը՝ ժուրը՝ սառանա, դուրսը՝ ֆանանա— դուրսը՝ ֆանանա, ժուրը՝ սառանա, խուփը գլուխով՝ գառվ պուտուկը (կնունը)— գլուխով խուփը՝ գառվ պուտուկը (կնունը) և այլն:

3. Բառակազմական տարբերակներ կոչվում են այն Դ-ները, որոնց փոփոխվող բաղադրիչները բառակազմական տարբերակներ են: Այսպես՝ խելփին մոռ(մոռիկ), սպիտակ դռն(դռնակ) բառացնել և այլն:

4. Ձևաբանական-շարանյուսական խմբի տարբերակներն ունեն կրկնակի արժեք՝ և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական, ընդ որում՝ ձևաբանական արժեքն ունի այն դերը միայն, որ ընկած է շարահյուսականի հիմքում և պայմանավորում է այն: Այսպես, օրինակ՝ կայենի (կայենական) դռնը, աչքը դեռ չէր թարթել (չթարթած) և այլն: Այս խմբում կարելի է առանձնացնել. ա) միևնույն բաղադրիչը տարբեր հոլովաձևերով անդամ ունեցող Դ-ներ, օրինակ

¹⁰ Նույն տեղում, էջ 80:

ասեղի ծակից (ծակով) անցնել, հազար մաղի (մաղից) հաց կերած, լույս(ը) ֆեզ(ֆո) տեսնողին և այլն:

բ) Որևէ հոլովածևով և կապական կապակցությամբ փոփոխակիզող Դ-ներ՝ կրակին (կրակի վրա) ջուր լցնել, հոսանքի հեռ (հոսանքով) քնալ և այլն:

Ճ. Բառաշարահյուսական տարբերակները ևս երկար թեք են: Բառարաններում այսպիսի օրինակներ ենք գտնում՝ զորաի արյունով (արյուն ունեցող), զուլիսը թափ ալ (թափահարել), իրեն թանկացնել (թանկ ծախել) և այլն:

Նույնականության ու տարբերության տեսանկյունից սրանք առանձին միավորներ չեն, այլ իմաստային միևնույն հիմքն ունեցող և մի Դ-ի սահմաններում նույնացող փոփոխականներ, ուստի բառարանում անպայման պետք է միասին ներկայացվեն: Ժամանակակից հայերենի բառարաններում քերականական տարբերակներն անհրաժեշտ ու մանրակրկիտ դարձվածագրական մշակման են ենթարկված, և հեշտությամբ կարելի է ճանաչել տարբերակ ու ինքնուրույն միավորները:

Իմաստային նույնության դեպքում Դ-ների նույնականությանը հակադիր լեզվական երևույթը Դ-ների տարբերության երևույթն է՝ հոմանիշությունը: Այս դեպքում էլ Դ-ներն ունեն միևնույն իմաստային հիմքը, սակայն դրանք չեն գտնվում նույն Դ-ի սահմաններում, այլ առանձնանում են որպես տարբեր միավորներ: Եթե դարձվածային տարբերակները բնութագրելիս նշվում է իմաստի, բաղադրիչային կազմի և Դ-ի հիմքում ընկած պատկերային նկարագրի նույնությունը, ապա հոմանիշության համար բերվում է միայն իմաստային նույնությունը (կամ մոտիկությունը), իսկ բաղադրիչային կազմն ու պատկերային նկարագիրն այս դեպքում տարբեր են: Յու. Ստեպանովը Դ-ների հոմանիշությունը համար երկու շափանիշ է նշում՝ իմաստային և ձևական¹¹: Որպեսզի Դ-ները հոմանիշ համարվեն, պետք է ունենան իմաստային ընդհանրություն, բայց ոչ մի դեպքում չպետք է նույնանան իրենց հիմքում ընկած պատկերներով: Սա Դ-ի հոմանիշության իմաստային շափանիշն է: Օրինակ՝ գողացած ափսոսի պոչը փեշի տակից կերևա—մախաթը պարկում չես թաքցնի, հավին ֆշա անել (մեկի)— թանին թքու ասել (մեկի), արջի ծառայություն մատուցել (անել)— հոգեք շինելու փախաբեն՝ աշֆե էլ հանել և այլն: Դ-ների հոմանիշության ձևական շափանիշը բացառում է Դ-ների բաղադրիչների փոխադարձ փոխարինելիությունը: Այսինքն՝ եթե Դ-ները ոչ թե փոփոխականներ են, այլ հոմանիշներ, դրանց անդամները հնարավոր չէ մեկը մյուսով փոխարինել: Այս սկզբունքի համաձայն թախաթը պախա— ծալը պախա— շապիկը կարեն շարքում առաջին և երկրորդ Դ-ները պետք է համարել տարբերակներ, իսկ երրորդը՝ դրանց հոմանիշը, քանի որ չի կարելի ասել՝ ծալը կարճ և շապիկը պախաս: Տ. Չերդանցևան հոմանիշների միջև տեսնում է ոչ միայն իմաստային ընդհանրություն, այլև դրանց հիմքում դնում է այն զուգորդությունների ընդհանրությունը, որոնք առաջանում են որպես նույն կամ համանման իրադրությունների պատասխան դրսևորում, մասնակցում և օգնում են Դ-ի իմաստի բացահայտմանն ու բնութագրմանը¹²: Ա. Մուրտկովը սրան ավելացնում է բառաքերականական նույն բնութագրերն ու տարբեր բաղադրիչային կազմ ունենալը¹³: Բառական հոմանիշների նման դարձվածային հոմանիշներն էլ կարող են լինել ինչպես նույնանիշ՝ նույնական իրենց իմաստով ու ոճական նկարագրով, այնպես էլ հոմանիշ՝ տարբերվել իմաստային երանգավորմամբ, ոճական կամ հուզարտահայտչական բնութագրով: Այսպես, նույնանիշներ են օրինակ՝ փոքրիկ մի բաժակ ջրում— ոչնչից շատ աղմուկ, բերանից կաթի

¹¹ Ю. С. Степанов, Основы общего языкознания, М., 1975, с. 59.

¹² Т. З. Черданцева, Итальянско-русский фразеологический словарь. Предисловие, М., 1982, с. 8.

¹³ А. И. Молотков, Фразеологический словарь русского языка, М., 1978, с. 19.

հոտ գալ— օվից նոր դուրս գալ և այլն: Այսպիսով, դարձվածային հոմանիշները կարող են տարբերվել:

ա) իմաստային երանգավորմամբ, օրինակ՝ ճանձն փշել— փամի կով տալ— վիզը հով պահել Դ-ներն ունեն ճանգործ լինել, պարապ ման գալ, թափառել, թրև գալ» նշանակությունը, սակայն, եթե առաջին երկուսը նույնանիշ են, ապա երրորդը հոմանիշ է, քանի որ ունի ձիւնայել, աշխատանքից խուսափել» լրացուցիչ երանգը, որով և տարբերվում է նախորդներից:

բ) Ունակն նկարագրով՝ գլուխ պահել (գրկ.)— մեջ ունել դրազ ման գալ (պտտվել) (խակց.), օծիք բաց շթողնել (գրկ.)— երեսը պնդացնել (խակց.)— ձուր ու ծամոն դառնալ (բրբ.), արյունը ջուր դառնալ (գրկ.)— լեղին պաասվել (Տափել) (բրբ.) և այլն:

դ) Հուզարտահայտչական գունավորմամբ, օրինակ, նույն ժամանակ իմաստն ունենալով՝ հետևյալ Դ-ները տարբեր վերաբերմունք են արտահայտում՝ մահկանացուն կնքել, կյանքի թելը կտրել, երկար ապրել պատվիրել, հոգին ավանդել արտահայտում են ավելի չեզոք վերաբերմունք, շունչը փշել՝ թույլ հեգնանք, այնինչ՝ ոտքեր տնկել (երկարել, ձգել), գրողի ծոցը գնալ, շան սատակ լինել և այլն ունեն արհամարհական երանգ և բառարանում ուղեկցվում են «արհամարհական» կամ «գոհակաբանական» նշումով:

Այն Դ-ները, որոնք օժտված են հուզարտահայտչական որևէ գունավորմամբ՝ արտահայտում են հեգնանք, ծաղր, արհամարհանք և այլն, բառարաններում միանգամայն առգարացիորեն ներկայացվում են համապատասխան նշումներով: Երբ բառարաններում էլ Դ-ները հետևողականորեն ուղեկցվում են ոճական նկարագրի բացահայտող դիտողություններով և հիմնավորվում ցուցադրական այնպիսի օրինակներով, որոնք օգնում են ճիշտ պատկերացում կազմելու յուրաքանչյուր Դ-ի կիրառական առանձնահատկությունների մասին:

Դարձվածագրության մեջ հոմանիշներն օգտագործվում են ոչ միայն համապատասխան գիտական տվյալներ բերելու, այլև Դ-ի իմաստային բնութագրման, կիրառական, ոճական առանձնահատկություններն ընդգծելու և ճիշտ լիտորության հնարավորությունն ասեղծելու համար:

Դ-ի նույնականության ու տարբերության մեկ այլ արտահայտությունը, դրսևորումն էլ բազմիմաստություն—համանունություն հակադրությունն է, որը, ինչպես արդեն ասվել է, ձևակառուցվածքային նույնության պահպանման պայմաններում իմաստային տարբերակներ է ինքնուրույն Դ-ների հակադրությունն է: Բազմիմաստության ժամանակ տարբերակները ձևավորվում են բովանդակության պլանում, այնինչ արտահայտության պլանը բացարձակապես անփոփոխ է մնում: Դ-ների բազմիմաստությունը լեզվում նույնքան զարգացած ու տարածված երևույթ է, որքան բառական բազմիմաստությունը: Դա պայմանավորված է Դ-ների փոխաբերական բնույթով ու մեծ վերացարկվածությունն ունենալու հատկությամբ: Սա խանգարում է երկրորդային փոխաբերությունը (Դ-ների բազմիմաստությունը կարող է փոխաբերական երկրորդային կամ զուգահեռ տեղաշարժերի արդյունք լինել)¹⁴, քանի որ իմաստային մյուս տարբերակը ևս պետք է ունենա նույնարժեք պատկերավորություն ու վերացարկվածություն, որքան և առաջինը: Մյուս հանգամանքն այն է, որ Դ-ների բովանդակությունը, իմաստը՝ կառուցվածքային քերականական կադմակերպությամբ պայմանավորված, ավելի պակաս ընդգրկում, ընդհանրական է, քան բառերինը:

Լեզվաբանական այս երևույթն իր մի եզրով շփվում է պլատոնիստիայի¹⁵ (հունարեն՝ platus— «բնդարձակ, ծավալուն» և sema— «իմաստ, նշանակություն» բառերից և նշանակում է «իմաստային լայնածավալություն»), իսկ մյուսով՝ համանունության հետ: Պլատոնիստիան արտահայտում է լեզվական

¹⁴ Տե՛ս В. И. Якимин, *Եղվ. աշխ.*, էջ 73:

¹⁵ Առաջին անգամ օգտագործում է Ա. Կունինը («Основные понятия английской фразеологии как лингвистической дисциплины и создание англо-русского фразеологического словаря». Докт. диссертация, М., 1964, с. 750).

մի երևույթ՝ իմաստային շերտավորում մենիմաստության շրջանակներում, երբ իմաստային նրբերանգները խմբավորվում են առանցքային իմաստի շուրջը: Այսպես՝ գույն թափ՝ գույն առնել Դ-ն ունի «խիստ հուզվել» իմաստը: Սա մի «բարդ» իմաստ է, ուր պարզ կերպով նկատվում է իմաստի երկփեղկվածություն, շերտավորում՝ «հուզմունք» և «գունափոխում»: Այսպես նաև՝ (մաքմիներ, ձեռքեր, ծախք) դադ բեկնել Դ-ը, ուր նույնպես նկատվում է պլատոնոսեմիա, որը տվյալ դեպքում դրսևորվում է պատճառահետևանքային կապի ձևով՝ «վախենալ (սարսափել), զայրանալ» և (դրանից) «գողալ»: Եթե պլատոնոսեմիայի ժամանակ երկու իմաստները կամ իմաստի երկու կողմերը ի հայտ են դալիս միաժամանակ և համատեքստում միաձուլվ են հասկացվում, ապա բազմիմաստության ժամանակ այդ իմաստները շեն կարող հանդես գալ միևնույն համատեքստում:

Հիմնվելով Դ-ի հատկանշական իմաստային միասնականության կամ իմաստի ձուլվածության աստիճանի, համատեքստի հետ փոխազդեցության պայմանների շուրջ կատարված ուսումնասիրությունների վրա՝ լեզվաբանության մեջ մշակվել են դարձվածային բազմիմաստության առաջացման հնարավոր ուղիները: Վ. Գրիշանովան, օրինակ, այդպիսի մի սկզբունք է համարում յուրաքանչյուր իմաստի վերաբերությունը մտքի տարբեր առարկաներին¹⁶, Ս. Յոմինան բերում է շարահյուսական տարբեր գործառույթ, քերականական իրացման տարբեր պայմաններ (քերականական տարբեր նկարագիր), արտահայտչառական տարբեր բնութագիր ունենալու և այլ սկզբունքներ¹⁷: Քրոնոարկներ դրանցից մի քանիսը.

1. Միևնույն Դ-ի իմաստային տարբերակներ կարող են առանձնացվել իմաստային լրացուցիչ երանգի առկայությամբ ու բացակայությամբ (դարձվածային մի տարբերակը մյուսի համեմատությամբ ունի իմաստային լրացուցիչ ծանրաբեռնվածություն): Այսպես, օրինակ՝ խելք գլխից (թոցնել, գնալ) Դ-ը ՀԼԴԲ-ում ներկայացվում է որպես բազմիմաստ՝ ա) «խելքից, բանականությունից զրկվել, ցնորվել, հիմարանալ», բ) «գիտակցությունը կորցնելու աստիճան ուրախանալ, ուրախությունից, հիացմունքից, զարմանքից խենթանալ»: Երկրորդ իմաստն առանձնացվում է խենթանալու պատճառի կամ առիթի (ուրախություն, զարմանք...) լրացուցիչ նշանակությունն ունենալու սկզբունքով:

2. Իմաստային տարբերակները կարող են միմյանց նկատմամբ գտնվել ընդհանուրի, վերացականի և կոնկրետի կամ մասնավորի հարաբերության մեջ: Այսպես՝ լույս աշխարհ բերել Դ-ն ունի՝ ա) «երևան բերել, հրապարակ հանել» իմաստը և դրա ավելի կոնկրետ դրսևորումը՝ բ) «ծնել, երեխա ունենալ»:

3. Բազմիմաստ Դ-ների իմաստների առանձնացման շահանիշ կարող է լինել նաև հոմանշային (կամ հակաշային) փոխարկումը: Եթե իմաստներից յուրաքանչյուրն ունի մեկ հոմանիշ (հականիշ) կամ հոմանիշային (հականիշային) շարք, որը չի համապատասխանում մյուս իմաստներին, ուրեմն Դ-ը բազմիմաստ է և առանձնացված իմաստային տարբերակները ճիշտ են: Այսպես՝ դաճակ գարկես (խփես)՝ առյուծ չի գա(կաթի) Դ-ն ունի՝ ա) «մի բանի համար կամ պատճառով շահագնաց տխրել՝ սուգ պահել, վատ տրամադրություն մեջ լինել», որին համապատասխանում է Թխրել, սգալ, տրամել, սաստիկ վշտանալ և այլն հոմանշային շարքը և բ) «սաստիկ վիրավորված, խոցված լինել», որին համապատասխանում է նեղացած, վիրավորված, խոցված լինել հոմանշային շարքը:

Այս և բազմաթիվ այլ իմաստային ու քերականական միջոցներ օգնում են իմաստային տարբերակների ճիշտ առանձնացմանն ու հնարավոր խախտում-

16 В. Н. Гришанова, К вопросу разграничения значений полисемичных фразеологических единиц («Русский язык в школе», 1979, № 6, с. 85).

17 М. И. Фомина, Современный русский язык. Лексикология, М., 1983, с. 259.

էնրից խուսափելուն (որն իրականում համարյա անխուսափելի է): Բառարան-էներում՝ ևս հանդիպում են դեպքեր, երբ տարբերակ իմաստների առանձնացումն ունի իր ստվերոտ կողմերը: Այսպես, երբեմն Դ-ի համար չեն նշվում նրա իմաստային բոլոր տարբերակները, օրինակ՝ փալաւ դառնալ Դ-ի համար ՀԼԴԲ-ում բերվում է «անպետքանալ, ոչնչի պետք չգալ, (փխբ.) կամազրկվել» նշանակությունը: Մինչդեռ այստեղ կարելի է բազմիմաստություն տարբերակել, ինչպես ԱՀԲԲ-ում ա) «մաշվել, անպետքանալ (հագնելիքի կամ գործվածքի մասին)» բ) «թուլանալ, անուժ, ուժասպառ դառնալ», գ) «կամազրկել, թուլամորթ դառնալ» իմաստներով: Կամ՝ առեր սեանալ Դ-ի համար նշվում է «զոհվել, կյանքից զրկվել, դժբախտանալ» իմաստը: Մեղ թվում է, այստեղ ոչ թե պլատոնոսեմիա է, այլ բազմիմաստություն, որը հիմնավորում ենք Վ. Գրիշանովայի վերևում նշված սկզբունքով և տարբերակում՝ ա) «զոհվել, կյանքից զրկվել» և բ) «դժբախտանալ» իմաստները:

Երբեմն որպես իմաստի բացատրություն է բերվում ոչ թե կամ ոչ միայն դարձվածային նշանակությունը, այլև ոչ կայուն բառակապակցության իմաստը, որը թվում է, դարձվածաբանական բառարանի խրն-գիրն ու նպատակը չէ: Որոշ դեպքերում էլ դարձվածային իմաստի հետ միասին այն բերվում է որպես բազմիմաստություն: Օրինակ՝ ժամ ու պատարագ Դ-ի համար նշվում է ոչ դարձվածային իմաստը՝ «եկեղեցական ծեսեր, քրիստոնեական կրոնով նախատեսվող արարողություններ», այնինչ Դ-ն այս դեպքում սա չէ, այլ ժամ ու պատարագ չլինել (մեկի համար) — «որևէ բանի, սահմանված կարգի, տեղի չենթարկվել» իմաստով, ինչպես ներկայացված է ԺՀԼԲԲ-ում: Որոշ Դ-ների համար որպես առանձին իմաստ բառարանում ներկայացված է ստուգաբանական իմաստը: Սա, անշուշտ, նախընտրելի ու գիտական չէ, որը և ապացուցվում է ընտրված սկզբունքի անհետևողական կիրառությամբ. շատ դեպքերում դրանք տրվում են որպես ստուգաբանական տվյալներ: Այսպես՝ Պաշկայի սկրաւ և դելֆյան պատգամախոս Դ-ների համար դրանց դարձվածային իմաստն ընդհանրապես չի բերվում, իսկ Արա Գեղեցիկ, դանայան (դանայիգյան, դանայիգների) աշխատանք Դ-ների համար այն բերվում է որպես իմաստային տարբերակ՝ առանձին (համարակալում ունեցող) իմաստ:

Իմաստային տարբերակների հարցը դարձվածաբանական բառարանում իր լուծման բազմաթիվ նրբություններն ու դժվարություններն ունի: Դրանցից ամենակարևորը Դ-ի նույնականության ու տարբերության տեսանկյունից համանունությունը բազմիմաստությունից տարբերելու և առանձին գլխաբանորով ներկայացնելու հարցն է, որը, հնարավորությունների սահմաններում, իր լուծումը պետք է գտնի ցանկացած դարձվածաբանական բառարանում: «Դարձվածային համանունությունը Դ-ի արտաքին պլանի՝ արտահայտության կամ գրության (մասնակի) և կամ և՛ արտահայտության, և՛ գրության (լիակատար) նույնությունն է՝ բովանդակության պլանի բացարձակ տարբերությամբ»¹⁸: Համանունության ու բազմիմաստության սահմանազատումը չափազանց կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ դարձվածագրական առումով: Դրանք ոչ միայն լեզվական անկախ երևույթներ չեն, այլև երբեմն ներկայացնում են միևնույն երևույթի աստիճանական վերափոխումը մյուսին: Այդ պատճառով որոշ դեպքերում անհնար է կտրուկ սահման դնել դրանց միջև: Ա. Կունինը բազմիմաստություն — համանունություն հակադրությանն աստիճանավորման տեսք է տալիս՝ պլատոնոսեմիայից մինչև համանունություն. 1) պլատոնոսեմիա, 2) բազմիմաստություն, 3) բազմիմաստության և համանունության միջև մի միջանկյալ խումբ՝ իմաստային երանգավորում, նույնականու-

¹⁸ Л. И. Ройзензон, Из наблюдений над фразеологией чешского языка («Ученые записки Киргизского государственного университета», вып. 5, Фрунзе, 1958, с. 32—33).

թյան ոչ լրիվ խախտումով¹⁹։ Սա, հավանաբար, բացատրվում է համանունների առաջացման ուղիներով՝ տարբեր իմաստների զուգահեռ առաջացմամբ ու հետագա գոյատևմամբ և իմաստային տարբերակների զարգացմամբ, որն աստիճանական գործընթաց է և նույնպես կարող է հանգեցնել համանունության։ Ահա այս գործընթացի ժամանակ էլ լեզվի ուսումնասիրության համաժամանակյա կտրվածքում կարելի է գտնել այդպիսի միջանկյալ ձևեր, որոնք ապացուցում են դարձվածաբանական նույնականության ու տարբերության խնդրի բազմակողմանի էությունը։

4) Համանունություն՝ ձևակառուցվածքային պլանի համեմատաբար լրիվ նույնություն և իմաստային բացարձակ տարբերություն ու դրա հետևանքով ինքնուրույն Դ-ների առանձնացում։ Այսպես, ՀԼԴԲ-ում գտնում ենք՝ աչքը կպչել — «հավանել, դուր գալ» և աչքը կպչել (կպցնել) — «թեթև քնել, քուն մտնել» կամ՝ խաչ ֆաչել — «խաչակնքվել» և խաչ ֆաչել (մի բանի կամ մեկի վրա) — «մի բանից հրաժարվել, բոլոր հույսերը կտրել, որևէ բան կամ մեկին անվերադարձ կորած համարել» և այլն։

Երբեմն Դ-ի ձևակառուցվածքային տարբերակները ենթարկվում են իմաստային տարբերակման և դրանցից յուրաքանչյուրը սկսում է գործածվել առանձին, ինքնուրույն իմաստով՝ դուրս գալով Դ-ների նույնականության սահմաններից։ Այսպես՝ առամները (առամ) ցույց տալ Դ-ի համար ՀԼԴԲ-ում բերվում են հետևյալ իմաստները՝ 1. «անշնորհ կերպով ծիծաղել» 2. «սպառնական դիրք բռնել, իր թշնամական կամ գիշատիչ էությունը երևան հանել»։ Իրականում այստեղ գործ ունենք երկու համանուն Դ-ների հետ՝ առամները (առամ) ցույց տալ — «սպառնական դիրք բռնել...», որն ի դեպ ունի իր քերականական տարբերակը և առամները ցույց տալ — «անշնորհ կերպով ծիծաղել» (քերականական տարբերակ չունի), որոնց տարբերակումը առանձին Դ-ների կարող է կատարված լինել կամ պատմական զարգացման ընթացքում՝ կամ Դ-ների ձևավորման ժամանակ՝ երկու զուգահեռ փոխաբերությունների միջոցով, երկու իմաստների միաժամանակյա առաջացմամբ։

Իմաստային տարբերակների ու համանունների առանձնացման համար չափազանց կարևոր է համատեքստում դրանց նշանակության բացահայտումն ու մեկնաբանումը, որը կատարվում է ցուցադրական չիշտ ու տիպական օրինակների ընտրությամբ և բառարանում դրանց բաշխմամբ։ Համատեքստը ոչ միայն հաստատում է Դ-ի գոյությունը լեզվում, կարևոր տեղեկություններ տալիս նրա նշանակության, իմաստային նրբերանգների, ոճական, կիրառական առանձնահատկությունների ու տարբերությունների մասին, այլև օգնում նույնականության ու տարբերության սահմանազատմանը։ Դարձվածաբանության մեջ հաճախ կիրառվում է կոմուտացիայի մեթոդը, որը Դ-ների սահմանների որոշման, դրանց նույնության ու տարբերության առանձնացման, փոփոխակ ու անփոփոխակ միավորների հաստատման կարևոր և շատ արդյունավետ մեթոդներից է։ Ահա թե ինչու յուրաքանչյուր ցուցադրական օրինակ, որ տեղ է գտնում բառարանում, պետք է առավելագույն չափով համապատասխանի ու բավարարի իր նպատակներին։

Այսպիսով՝

1. Դ-ների տարբերակության հարցը պետք է համարել ու քննել որպես նույնականության դրսևորման ձև։ Դարձվածային տարբերակությունն ընդգրկվում է տարբերակների երկու տեսակ՝ ձևակառուցվածքային և իմաստային։ Ձևակառուցվածքային տարբերակները նույնական են բովանդակության պլանում և տարբերակված՝ արտահայտության պլանում (հնչյունական, բառական, քերականական)։ Իմաստային տարբերակները ձևակառուցվածքային

¹⁹ А. В. Кунин, *Եզվ. աշխ.*, էջ 750—754։

նույնության պահպանման պայմաններում դրոշմորոշում են իմաստային տարբերություններ (բազմիմաստություն)։

2. Զեականացվածքային տարբերակների սահմանը ձգվում է մինչև հոմանիշություն, իսկ իմաստային տարբերակները, ծագելով պլատոնոսեմիայից, վերածվում, վերաճում են համանունության։ Ինչպես դարձվածային հոմանիշները, այնպես էլ համանուններն արդեն գիտակցվում են որպես միանգամայն առանձին ու ինքնուրույն միավորներ։

3. Նույնական և տարբեր Դ-ների զանազանումն ու հիմնավորումը հենվում են անփոփոխակի գոյության վրա. ձեականացվածքային տարբերակների համար պարտադիր է համարվում իմաստային անփոփոխակի՝ ընդհանուր նշանակությունը և առավել կամ պակաս կայուն կառուցվածքային անփոփոխակի, իսկ իմաստային տարբերակների համար՝ ձեականացվածքային անփոփոխակի, և առավել կամ պակաս զգալի իմաստային անփոփոխակի։

4. Այս հարցի խորը և բազմակողմանի ուսումնասիրությունն անհրաժեշտ ու կարևոր է ոչ միայն տեսական դարձվածաբանության, այլև դարձվածագրության՝ դարձվածաբանական նյութի համակողմանի ու ամբողջական մշակման, գիտական, բայց միևնույն ժամանակ մատչելի մատուցման համար, որովհետև բառարանը ոչ միայն բառապաշարի հարստությունների պահպանման զանազան է, այլև գիտական դասակարգման սկզբունքներով լեզվի ուսուցման միջոց։

ТОЖДЕСТВО И ОТДЕЛЬНОСТЬ ФРАЗЕОЛОГИЗМОВ И ОСОБЕННОСТИ ИХ ФРАЗЕОГРАФИЧЕСКОЙ РАЗРАБОТКИ

ЛИЛИТ ТЕР-ГРИГОРЯН

Р е з ю м е

Проблема тождества и отдельности фразеологизмов является одним из самых актуальных вопросов фразеологии и фразеографии. Разграничение тождества и отдельности, которое в плане выражения фразеологизмов наблюдается в дифференциации вариантных и синонимичных, а в плане содержания—многозначных и омонимичных фразеологических единиц,—имеет большое теоретическое и практическое значение. Фразеографическая разработка этого вопроса имеет свои особенности, специфику и трудности. Целостная и многосторонняя практическая разработка фразеологизмов имеет глубокую теоретическую основу. Фразеографическая разработка тождества и отдельности фразеологизмов проводится на материале армянской фразеографии.